Արձանագրություն N 2-4

ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-26/11 ծածկագրով ՀՀ Կոտայքի մարզի «Նոր Հաճնի պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի վերակառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 18.05.2026թ.
ժամը 10:10

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Գևորգյան

Հանձնաժողովի անդամներ՝ Կ. Հարությունյան
Լ. Մելիքյան
Հ. Պապյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Նիկոլայան

1. Մասնակիցների հայտում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու մասին

(Գ. Գևորգյան)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների մասին 14.05.2026թ. ծանուցվել է վերջիններիս՝ առաջարկելով ՀՀ կառավարության 04.05.2017թ N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի պահանջների համաձայն՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչն էլ սահմանված ժամկետում արվել է նրանց կողմից:

Ընդունվել է որոշում՝ կողմ –4, դեմ – 0:

2. Գնման ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների մասին

(Գ. Գևորգյան)

2.1 Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 7-րդ ենթակետը, գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ մասնակիցների հայտերը գնահատվել է հետևյալ կերպ՝

Մասնակցի զբաղեցրած տեղ	Մասնակցի անվանում	Գնահատման արդյունքում ստացած միավոր
Ընտրված մասնակից	«ՍԵՅՍՄՇԻՆ» ՍՊԸ	94,286
Այդպիսին չճանաչված մասնակից	«Վահրամ Կնյազյան» ԱՁ	86

Ընդունվել է որոշում՝ կողմ –4, դեմ – 0:

3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Գ. Գևորգյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2.1 կետով ընդունված որոշումը, ինչպես նաև Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «ՍԵՅՍՄՇԻՆ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ –4, դեմ – 0:

4. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

(Գ. Գևորգյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը (կամ չկնքվելու հանգամանքը հայտնի դառնալու օրը) ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ –4, դեմ – 0:

Հանձնաժողովի նախագահ՝ ---------- Գ. Գևորգյան

Անդամներ՝ ---------- Կ. Հարությունյան

---------- Լ. Մելիքյան

---------- Հ. Պապյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն. Նիկոլայան